«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Ջուլիետա Ավագյան

Ուսումնական հաստատություն՝ Պարտիզակի Ահարոնի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5

1.1 Մտածողության ձևերը 5

1.2 Մտածողության զարգացման կարևորությունը 10

ԳԼՈՒԽ 2. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 15

2.1.Ինչպես զարգացնել վերլուծական մտածողությունը 15

2.2. Վարժություններ վերլուծական մտածողության համար 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ՀԱՎԵԼՎԱԾ 22

Օգտագործված աղբյուրների գրականության ցանկ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհը շատ արագ է զարգանում, նորամուծությունները մեծ քայլերով ներխուժում են մեր կյանքի բոլոր ոլորտները: Կյանքը նոր մարտահրավերներ է նետում մարդկությանը՝ պահանջելով շատ արագ կողմնորոշվելու և վճիռ կայացնելու կարողունակություններ և հմտություններ զարգացնելու մարդկանց մոտ: Այդ խնդիրները առավել կարևորվում են փոքր ազգերի համար, որովհետև համաշխարհայնացման գործընթացը նրանց կանգնեցնում է ազգային և մշակութային ինքնության պահպանման խնդրի առաջ: Խնդրի կարևորությունն ու լրջությունը պետք է խորությամբ հասկանա մատաղ սերունդը, որովհետև վաղվա օրվա մեր փոքր հայրենիքի պահպանության, պաշտպանության և զարգացման պատասխանատու գործը իրենց ուսերին է դրվելու:

Թեմայի ուսումնասիրությունը շատ կարևոր է, որովհետև մենք ապրում ենք աշխարհագրական այնպիսի պայմաններում, որ պահանջում է մեզանից յուրաքանչյուրի ծանրակշիռ և լուրջ մոտեցում պետական-քաղաքական հարցերի լուծմանը: Այդ հարցի լուծումը սկսելու ենք նախադպրոցական տարիքից և խորացնելու ու զարգացնելու ենք դպրոցական տարիքում: Դա կօգնի երեխաներին ճիշտ կողմնորոշվելու և պատրաստ ինքնուրույն կյանք մտնելու, քաղաքական խնդիրներին ազգային շահերի տեսանկյունից լուծում տալու հարցում:

Սերնդի դաստիարակությամբ և կրթությամբ զբաղվում է կրթության ոլորտը՝ հատկապես հանրակրթությունը: Կրթության բնագավառը հանդիսանում է պետության զարգացման և ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտ: Երեխայի սովորելու, հասկանալու և ընկալելու կարողությունները առավել ակտիվ են դպրոցական տարիքում: Ուղեղի աշխատանքի արդյունավետությունը կախված է նրանից, թե ինչպես է այն մշակվում, հղկվում և վարժվում: Այդ գործում մեծ է ուսուցչի դերը: Նա պետք է ուսուցման պրոցեսը կազմակերպի և անցկացնի այնպես, որ կարողանա լիարժեք օգտագործի երեխայի ընդունակությունները, հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը իր բոլոր կողմերով: Դրանք կարևոր և որոշիչ դեր ունեն մարդկանց կյանքում, երբ կանգնում են վճռական խնդիրների լուծման առաջ: Իրավիճակին ճիշտ լուծում տալ կարողանում է այն անձը, ով

տիրապետում է գիտելիքի, կարողանում է հասկանալ տվյալ իրավիճակը, ընկալել թեկուզ աննշան թվացող մանրուքները, վերլուծել և համադրել իրավիճակը, գնահատել դրական կողմերը և հենվելով դրա վրա ճիշտ լուծում տալ խնդրին: Ուսուցիչը կարող է հասնել վերջնարդյունքի, եթե ուսուցման պրոցեսում կիրառի ճիշտ մեթոդներ, վարժանքներ և հնարքներ:

Սովորողի ուսուցման և դաստիարակության գործում ուսուցչին պետք է աջակցի ծնողը: Նա դպրոցում սկսված գործը պետք է հասցնի տրամաբանական ավարտին: Ծնողի և ուսուցչի աշխատանքը պետք է նպատակաուղղված լինի երեխայի մոտ ուղեղի մտածողության տարբեր տեսակների, հատկապես վերլուծական մտածողության զարգացմանը: Սա է պահանջում ժամանակակից աշխարհը և մեր երկրի գերակա շահը:

Բանալի բառեր. ինֆորմացիա, քննադատական, ստեղծագործական մտածողություն, պատճառահետևանքային կապ, վերլուծություն, բաց հարցեր, գնահատում, ճանաչողություն:

Գլուխ 1.ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1.1 Մտածողության ձևերը

Ապրել նշանակում է մտածել:
Վոլտեր

Մարդն աշխարհը ճանաչում է զգայարանների միջոցով: Սակայն զգայարանները չեն արտացոլում առարկաների և երևույթների ներքին կողմերն ու օրինաչափությունները: Իրական աշխարհի ճանաչողությանը օգնում է իմացական գործընթացներից մտածողությունը: Մտածողությունը թույլ է տալիս մարդկանց մեկնաբանել, ներկայացնել կամ մոդելավորել աշխարհում իրենց փորձառությունը և կանխատեսումներ անել հենց այդ աշխարհի վերաբերյալ: Ուստի այն օգտակար է այն մարդկանց համար, ովքեր ունեն կարիքներ, նպատակներ և ցանկություններ, քանզի այն հնարավորություն է տալիս ծրագրեր կազմել հենց այդ նպատակներն իրականացնելու համար:

Մտածողությունը ճանաչողական գործունեության տեսակ է: Սա նշանակում է, որ այս գործունեությունը պատասխանում այս կամ այն ճանաչողական դրդապատճառի: Այդ ճանաչողական դրդապատճառն էլ տվյալ գործունեությանը տալիս է սուբյեկտի համար որոշակի իմաստ: Այս գործունեությունը, ինչպես մարդկային գործունեության այլ տեսակները, դժվար կարգավորվող է, մասնավորապես՝ սուբյեկտիվ կարգավորվող: Ընդ որում այս գործունեությունը կարգավորվում է հուզականորեն: Առանց հուզական բաղադրիչի առկայության հնարավոր չէ հասկանալ ոչ միայն գործընթացի դինամիկան, այլ նաև այն ֆունդամենտալ տրանսֆորմացիաները, որոնց ենթարկվում են ճանաչողական գործունեության այս գործընթացները:

Մտածողությունն առաջին հերթին իրենից ներկայացնում է ճանաչողական մոտիվացիա: Մոտիվացիայի կառուցվածքում կարևորում են դրդապատճառի հիմքում գտնվող պահանջմունքը, որը դրդապատճառի մեջ գտնում է իր զարգացումը, բովանդակությունը, բովանդակային բնութագիրը: Մտածողությունը միջնորդավորված ճանաչում է, որը սկզբում հանդես է գալիս

ոչ թե գործունեության, այլ գործողության ձևով, այսինքն սկզբում հանդես է գալիս ոչ թե ճանաչողական դրդապատճառը, այլ ամենից առաջ հանդես է գալիս ճանաչողական նպատակը: Մտածողության առաջացումը ճանաչողական նպատակների ծագումն է: Հաջորդ քայլում նպատակը և նրան համապատասխանող գործողությունը կարող է փոխակերպվել դրդապատճառի: Այնուհետև տեղի է ունենում դրդապատճառի շարժ դեպի նպատակ: Դա նոր շարժում է, որի շնորհիվ հնարավոր է դառնում գործողության փոխակերպումը ինքնուրույն գործունեության՝ իր դրդապատճառով: Գործունեության վերլուծության մեջ հնարավոր է գործողությունների փոխակերպում ոչ միայն դեպի «վերև», երբ գործողությունը վեր է ածվում գործունեության, այլև դեպի «ներքև», որի ժամանակ գործողությունը վերածվում է օպերացիայի (գործողության իրագործման միջոց՝ կատարողական տարր):

Մտածողությունը հաճախ մեկնաբանվում է որպես խնդրի լուծման գործընթաց: Խնդիրները կարող են առաջանալ այս կամ այն պրակտիկ գործունեության ընթացքում կամ էլ կարող են միտումնավոր ստեղծվել: Երկու դեպքում էլ խնդիրը հանդես է գալիս որպես օբյեկտ, մարդու մտավոր աշխատանքի առարկա: Մտածողությունը շրջապատող միջավայրի առարկաների և երևույթների հարաբերությունների և կապերի իմացությունն է: Վերջինս նորի որոնումն է:

Մտածողությունն իմացական գործընթաց է, որի միջամտությամբ մարդը կարողանում է դուրս գալ անմիջական զգայական արտացոլման միջոցով ստացված տվյալների սահմաններից, բացահայել երևույթներիների էական, օրինաչափ կապերն ու հատկանիշները: Մտածողությունը միջնորդված և ընհանրացված իմացություն է, ունի սոցիալական պայմանավորվածություն, իսկ նրա բարձրագույն տեսակները կապված են խոսքի հետ:

Մարդը սկսում մտածել այն ժամանակ, երբ նրան անհրաժեշտ է որևէ հարց լուծել, որևէ խնդիր իրականացնել: Այսինքն մարդը անընդհատ չի մտածում: Մարդ լարում է ուղեղը, մտածում, երբ կա պրոբլեմային իրավիճակ:

Կախված տարիքից մարդկանց մտածողությունը փոխվում է: Գոյություն ունի երեխաների մտածողության երեք տեսակ՝

1. ակնառու գործնական
2. ակնառու պատկերավոր

3. Խոսքային տրամաբանական կամ վերացական

Ակնառու գործնական մտածողությունը կիրառվում է առարկաների հետ կոնկրետ, շոշափելի գործողություններ կատարելու ընթացքում: Մինչև երեք տարեկան երեխան իրեն հետաքրքրող առարկաները համադրում է, վերլուծում, երբ ձեռքով խաղում է այդ առարկայի հետ:

Ակնառու պատկերավոր մտածողությունը իրագործվում է մտապատկերների հետ կատարվող գործողությունների միջոցով: Մտածողության այս տեսակը կիրառվում է երեքից բարձր մինչև յոթ տարեկան երեխաների կողմից, օրինակ՝ նրանք մտածում և պատկերացնում են, բայց չեն կարողանում դա կիրառել:

Խոսքային տրամաբանականը այն մտածողությունն է, երբ մարդը ինչ որ մտածում է, կարողանում է իր մտածածը, պատկերացրածը արտաբերել, իրականացնել խոսքի և լեզվի միջոցով: Այն իրագործվում է խոսքի և լեզվի պարտադիր մասնակցությամբ՝ վերացական հասկացությունների և դատողությունների ձևով: Խոսքային տրամաբանական մտածողությունը զարգանում է երեխաների մոտ դպրոցական հասակում գործնական և ակնառու զգայական փորձի հիման վրա:

Մտածողությունը մեծապես կախված է անձի առանձնահատկություններից: Դրանով պայմամավորված մարդիկ տարբերվում են մտքի լայնությամբ, խորությամբ, արագությամբ, ճկունությամբ և մտածողության ինքնուրույնությամբ:

Աշխարհընկալման խորացման հետ մարդու մոտ զարգանում է մտածողության տարբեր ձևեր: Ներկայացնենք մի քանիսը:

1. **Քննադատական մտածողություն**

Քննադատաբար մտածող մարդը կարողանում է հստակ ձևակերպել հարցեր և հիմնախնդիրներ, դրանց վերաբերյալ հավաքել տեղեկություններ և մեկնաբանել, կշռադատված եզրահանգումներ անել, արդյունավետ հաղորդակցվել այլոց հետ խնդիրները լուծելու նպատակով: Քննադատական մտածողության կարևոր բաղադրիչներից է արդարամտությունը: Շատ հաճախ մարդիկ տեսնում են ուրիշների մտածողության սխալները՝ անտեսելով

հակադիր տեսակետի ուժեղ կողմերը: Քննադատական մտածողության դրսևորումներն են արժևորումը, հիմնավորումը, դասակարգումը, վերլուծությունը: Մտածողության այս ձևը զարգացնելու համար շատ կարևոր է մտածել հետևյալ հարցերի շուրջ - ինչ է հետևում այս ամենից, կարող եք բերել տվյալ միտքը հաստատող կամ ժխտող օրինակներ, կարող եք բերել այլ իրավիճակներ, որոնցում տվյալ կանոնը գործում է: Նեղ իմաստով քննադատական մտածողություն նշանակում է պնդումների մտածված գնահատում: Ինչպես նաև մեկնաբանվում է որպես «մտածողություն մտածողության մասին»[1]: Ամենատարածված մեկնաբանություններից մեկն է՝ խելամիտ անդրադարձ (ռեֆլեքսիվ) մտածողություն, որն ուղղված է որոշում կայացնելու, թե ինչին է պետք հավատալ և ինչ է պետք անել: Առավել մանրամասն սահմանումն է՝ կիրառելիության, համադրման և տեղեկույթի գնահատման ակտիվ և հմուտ վերլուծության գործընթաց, հայեցակարգային ձևակերպում, որը ստացվում է ուսումնասիրություններով, փորձով, դատողություններով, հաղորդակցություններով[2]:

2. Ստեղծագործական մտածողություն

Սա մտածողության միջոց է, որը ստեղծում է նախկինում գոյություն չունեցող լուծումներ նոր կամ հին խնդիրների համար: Դա ստեղծագործականության հետ կապված հասկացություն է, որը կարող է խթանվել ինչպես չկառուցված գործընթացով, ինչպիսին է ուղեղի փոթորիկը, այնպես էլ կառուցվածքային գործընթացով, ինչպիսին է կողային մտածողությունը: Ստեղծագործական մտածողության ամենակարևոր բաղադրիչներից են քննադատական մտածողությունը, սոկրատական հարցերը, հեռանկարային փոփոխությունները կամ հաստատված / ստատուս քվոյի չընդունումը: Ստեղծագործական մտածողությունը, ինչպես հուշում է նրա անունը, վերաբերում է մտածողության այն ձևին, որն ունի ստեղծագործելու ունակություն. այսինքն՝ ունենալով մտածելու ունակություն այնպես, որ սեփական միտքն ունակ լինի նոր բան ստեղծել, հորինել կամ

1 Raiskums B. W. An Analysis of the Concept Criticality in Adult Education (2008)

2 Scriven M., Paul R. W. Defining Critical Thinking // 8th Annual International Conference on Critical Thinking and Education Reform, Summer 1987.— National Council for Excellence in Critical Thinking

արտադրել: Մտածողության այս տեսակը թույլ է տալիս ունենալ նոր գաղափարներ և տարբեր հասկացություններ ձեռք բերել՝ կապված ինչ-որ առումով: Օրինակ, եթե դուք ունեք ձեր սեփական բիզնեսը և ցանկանում եք գտնել ձեր արտադրանքը լավ գովազդելու բանաձևը, ձեզ լավ միտք պետք կգա:

3.Կառուցողական մտածողություն:

Սա գործընթաց է, որն իրականացվում է գործնական գործունեության ընթացքում և ուղղված է հատուկ խնդիրների լուծմանը, ռացիոնալ մտածողության հմտության օգտագործմամբ իրական առարկաների ստեղծմանը:

4. Տեսողական մտածողություն:

«Տեսողական մտածողություն», որի ժամանակ մադը ցանկանում է վերականգնել պատկերների հետ աշխատելու կարողությունը՝ ինչպես տեղեկատվությունը որսալու, այնպես էլ դրանք բացատրելու համար[3]:

5. Տրամաբանական մտածողությունը:

Սա մարդկային կարողություն է հասկանալու մեզ շրջապատող ամեն ինչ և գործողությունների, առարկաների կամ իրադարձությունների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները կամ տարբերությունները դիտարկել վերլուծության, համեմատության, աբստրակցիայի և երեւակայության միջոցով: Մարդկության մեջ մանկության ընթացքում զարգանում են միայն կոնկրետ մտքեր: Տարիքային փոփոխությունների և հասունության ընթացքում մենք ի վիճակի ենք տրամաբանական մտածողություն առաջացնել և այն անընդհատ կիրառել՝ լուծելու համար առօրյա կյանքում առաջացած տարբեր իրավիճակները:

Տրամաբանական մտածողություն անընդհատ կիրառվում է տարբեր գիտական ուսումնասիրություններում, քանի որ այն թույլ է տալիս վերլուծել,

3 https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B8%D5%BF%D5%AB%D5%BE%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1

համեմատել, որոշել և տարբերակել առարկաները, վարկածները, ընթացակարգերը նախորդ փորձից բխող տարբեր լուծումների միջոցով:

1.2 Մտածողության զարգացման կարևորությունը

Փորձենք ներկայացնել աշակերտների մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում: Որպես ներգործության միջոց՝ առանձնացվում է հարցադրումներով իրականացվող ուսումնառությունը: Այն կօգնի բացահայտել պատմական փաստերի ու երևույթների պատճառահետևանքային կապերը, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով փոխանցելի հմտություններ:

Անդրադառնանք առաջադեմ կրթական համակարգեր ունեցող տարբեր երկրների գիտամանկավարժական փորձին ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ռուսաստան և այլն): Նպատակն է առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին մտածողության մաս են կազմում: Առաջադրված վարկածն է՝ բաց հարցերի միջոցով իրականացվող ուսումնառությունը կարո՞ղ է նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը: Խնդիրն արդիական է: Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևոր է ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել մտածողության որոշակի փոխանցելի հմտություններ: Մանկավարժական գործունեության ընթացքում իմ ուշադրության առանցքում մշտապես եղել է աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը: Տարվա ընթացքում աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց տվեցին, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ

կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:

Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝ կանխորոշում են ուսումնառության նպատակները, հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման, նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը, նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով, ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը: Սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է: Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին դիմում են խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ ու փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս: Ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել մտածողությունը հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում և գիտական տարբեր ոլորտներում: Դժվար է գտնել մտածողության այնպիսի ոլորտ, որին հնարավոր չլինի տիրապետել[4]: Ամերիկյան քոլեջների սովորողները վկայում են, որ իրենց մտածողության

[4] http://shsu.am/media/journal/2019n1b/6.pdf

հմտությունները զգալիորեն բարելավվել են մտածողության հմտություններ սովորեցնող դասընթացներից հետո[5]: Նրանք սկսել էին ավելի բարձր գնահատել իրենց մի շարք չափանիշներով, ինչպիսիք են՝ առանց ավելորդ շտապողականության դատողություններ անել, կարողանալ գնահատել հակադիր փաստարկները, բազմակողմանիորեն գնահատել, հաշվի առնել անորոշության գործոնը: Նրանք նշել են նաև, որ խնդիրներ լուծելիս կիրառում են տարբեր էվրիստիկ մոտեցումներ, ինչպիսիք են ավելորդ փաստերի բացառումը, ինֆորմացիայի աղբյուրի հուսալիության գնահատումը: Հետազոտողները եկել են այն եզրակացության, որ գիտելիքները, որոնց ստացման ժամանակ տրվում են մտածողության ընդհանուր կանոններ, կարող են փոխադրվել նաև գործունեության այլ ոլորտներ: Պատմական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ: Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման[6]: Որպես մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Վերջիններս համարվում են «պատմական մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ: Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում....:

[5] http://shsu.am/media/journal/2019n1b/B-prak.pdf
[6] https://aspu.am/website/images/journal/ed211aa6.pdf

Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Նշեմ նաև, որ այս հարցադրումներին պատասխանելիս աշակերտների իրականացրած ճանաչողական գործունեությունը համապատասխանում է Բլումի մշակած աստիճանային համակարգի վերին աստճաններին և ենթադրում է գնահատում, աստիճանակարգում, արժևորում: Ինչպես նաև Սանդերսի հիշողությունփոխակերպում-մեկնաբանում-կիրառություն-վերլուծությունհամադրում-գնահատում համակարգում այս հարցերը դիտվում են իբրև հարցադրումների ամենաբարձր մակարդակ: Մտածողությունը՝ որպես ակտիվ ու նպատակաուղղված գործընթաց, սկսվում է առաջադրված որոշակի հարցերից: Տրամաբանության մեջ հարցը ձևակերպվում է որպես որոշ ինֆորմացիայի հարցում: Այլ կերպ հարցը մեկնաբանվում է որպես խթանող նախադասություն: Ինչքան մեծ է ինֆորմացիան, որի հետ դու աշխատում ես, այնքան կարևոր է կարողանալ առանձնացնել գլխավորն ու երկրորդականը: Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը: Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ: Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից: Հարցը յուրատեսակ մանրադիտակ է, գիտելիքների որոշակի համակարգ, որն իր մի մասով (հարցով) բնորոշում է այն, ինչ արդեն իսկ գիտենք, և ընկած է մեր գիտելիքի հիմքում, իսկ երկրորդ մասով (պատասխան) կա որոշ չիմացություն, այսինքն՝ այն, ինչ մենք ուզում ենք իմանալ: Ճանաչողության գործընթացում կարևոր է ֆիքսել այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել, բայց պետք նաև ֆիքսել այն, ինչը մենք դեռևս չգիտենք և ենթակա է պարզվելու: Այդպիսիք են հենց հարցերը: Հարցի կառուցվածքը հասկանալու համար նախ պետք է առանձնացնել այն, ինչ մենք արդեն գիտենք: Մեր իմացածի հիման վրա էլ արդեն կարելի է ձևակերպել հարցը: Հարցը՝ որպես ճանաչողության ձև, միջոց է պարզելու անհայտը՝ հենվելով ինչ որ հայտնի փաստի վրա: Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն կտա աշակերտին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր,

գործի դնել սեփական աշխարհայացքը: Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը: Պիտի ստեղծվի համապատասխան կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափում սեփական տեսակետն արտահայտելուց, գտնել օրինաչափությունները, սահմանել պատմական երևույթների ու գործընթացների բնույթն ու նշանակությունը,պատրաստ է լսել ու ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ:Այս դեպքում աշակերտի խնդիրն է փաստարկված դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ, ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ: Եզրահանգում: Այսպիսով, պատմության դասավանդման ընթացքում կարևորում ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել մտածողության հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

ԳԼՈՒԽ 2.ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1. Ինչպես զարգացնել վերլուծական մտածողությունը

Վերլուծական միտքը բարձր կազմակերպված միտք է: Այսօրվա աշխարհում կարեւորագույն պարամետրը հսկայական տեղեկատվության մշակման արագությունն է, որն անընդհատ փոփոխվում է, լրացվում է: Մարդու բարձր վերլուծական կարողությունները պահանջում են ավելի մեծ պահանջարկ, եւ այդպիսի մասնագետներ ամբողջ աշխարհում անհրաժեշտ են: Վերլուծական ունակությունների զարգացումը օգնում է անհատին, առանց ավելորդ զգացումների, հաղթահարելու դժվար իրավիճակները: Վերլուծելու ունակությունը օգնում է տեսնել արտադրանքը, որտեղ թվում էր, թե գոյություն չունի եւ պատճառահետեւանքային հարաբերությունների տրամաբանական շղթա կառուցել: Դետեկտիվի ժանրում ընթերցանությունը, ինչպես նաեւ հատուկ մտածելակերպի զարգացման վերաբերյալ հատուկ գրականությունը նպաստում է վերլուծական հմտությունների բարելավմանը.

Յուրաքանչյուր մարդ տաղանդավոր է եւ եզակի: Վերլուծական մտածելակերպը հազվագյուտ հատկություններից մեկն է, որը, ունենալով, կարող է հաջողակ լինել կյանքի շատ ոլորտներում: Գիտության, բժշկության, կրիմինալիստիկայի, հոգեբանության մեջ անհրաժեշտ է վերլուծել եւ տրամաբանել:

Տաղանդները սկսում են իրենց մանկությունից, իմաստուն ծնողները, նկատելով իրենց երեխայի ուժեղ կողմերը, սկսում են դրանք զարգացնել: Որ գործոնները որոշում են մարդու վերլուծությունը վերլուծելու համար: Մեկ պատասխանը ուղեղի ձախ կիսագնդի գերակշռությունը կամ գերիշխանությունն է, որը ենթադրում է տեխնիկական մտածողության, տրամաբանության եւ զգայարանների վրա մտքի տարածման համար: Վերլուծական մտածողությունը մտածողության մի գործընթաց է, որը ներառում է

- փաստերի, իրադարձությունների, երեւույթների ուշադիր վերլուծություն

- տրամաբանական շղթաներ կառուցելու ունակությունը
- տեղեկատվության մեծ հոսքի մեջ հիմնականը երկրորդականից առանձնացնելու ունակությունը
- տեսլական հեռանկար
- մտքերի հստակ հայտարարություն
- անուղղակի հերթականությունը

Վերլուծական մտածելակերպը կարող է համալրել որակը քննադատականությամբ: Քննադատական մտածելակերպը օգնում է վերլուծաբանին օբյեկտիվորեն նայել գաղափարներին, որոշումներին, տեսնել թույլ կողմերը եւ ստուգել ենթադրությունները եւ փաստերը: Խիստ քննադատական մտածելակերպով կա ուշադրություն դարձնելու մարդկանց թերությունների, դատողությունների, որոշումների վրա, որոնք խոչընդոտում են օբյեկտիվորեն գնահատելու, կիրառելու և դրական արդյունքներ ստանալու համար:

Վերլուծական մտածողությունը սերտորեն փոխկապակցված է տրամաբանական մտածողության հետ եւ հիմնվում է տրամաբանական շղթաների եւ կապերի կառուցման վրա: Գիտնականները վերլուծական մտածելակերպը համարում են աբստրակտ տրամաբանական մտածողության հայեցակարգին հավասար: Ցանկացած մտածողության գործողությունը նուրբ եւ բարդ գործընթաց է, որը ներառում է ինչպես ներքին մեխանիզմները, այնպես էլ արտաքին գործոնները:

Վերլուծական միտքը, ինչպես մյուս մարդու բնավորությունը կամ տաղանդը, չպետք է մնա որոշակի «կետում», անհրաժեշտ է մշակել այն, ինչ տրվում է ծնունդից: Հայտնի խոսքը. «Հաջողությունը տաղանդի 1 տոկոսն է եւ աշխատանքի 99 տոկոսը» կիրառելի է նաև վերլուծական հմտությունների զարգացման համար: Տարրական դպրոցից պետք է մշակել երեխայի ուղեղը՝ տալով համապատասխան առաջադրանքներ: Այն է՝

- խաչբառ հանելուկների, սկանավորումների լուծում

- ընթերցող պատմություններ, հերոսների գործողությունների, մոտիվացիայի, մղումների մասին պատկերացումներով
- բառախաղեր
- շաշկի կամ շախմատ խաղալ

Հիմնական դպրոցում հարց ու պատասխանի, մտագրոհի, գծապատկերների միջոցով երեխայի մոտ պետք է զարգացնել մտածելու, վերլուծելու, եզրակացություններ անելու կարողունակությունները:

Ավագ դպրոցում սովորողը ինքնուրույն պետք է կարողանա բացահայտել հիմնախնդրիը, ուսումնասիրել խնդրի առանձին կողմերը, պարզել դրանց պատճառահետևանքային կապերը, տարբերել կարևորը երկրորդականից,

2.2. Վարժություններ վերլուծական մտածողության համար

Վերլուծական ունակությունները սկսում են զարգանալ մանկությունից: Երեխայի համար օգտակար կլինի համատեղ զբաղմունք ունենալ ծնողների հետ հանելուկներ, ռեբուսներ, նկարների տարբերություններ գտնելու, բացակայող օբյեկտների որոնման համար: Մեծահասակների մոտ ձախ կիսագնդի եւ վերլուծական կարողությունների զարգացումը հնարավոր է ցանկացած վարժություն կատարելու միջոցով: Դրանցից են.

1. Արտաքինից ստացված ցանկացած տեղեկատվություն վերլուծել՝ քաղաքական և տնտեսական տեսակետից. որոնք են քաղաքական գործիչների, տնտեսագետների փաստարկները, որոնք կասկածներ են առաջացնում, որոնք կարող են լինել հնարավոր ճիշտ տարբերակները և այլն:
2. Ամեն օր ստեղծվում են տարբեր իրավիճակներ, որոնք լի են չնախատեսված իրադարձություններով և դրանցից բխող հետևանքներով: Անհրաժեշտ է մտածել մի քանի լուծումների մասին, որոնցից մեկը լավագույնն է: Հետո պետք է փաստերով հիմնավորել, թե ինչու է այդ լուծման տարբերակը լավագույնը:
3. Պարբերաբար լուծել տրամաբանական խնդիրներ: Դա կօգնի տարբեր իրավիճակներից հնարավոր օպտիմալ տարբերակով ելքեր գտնելու:
4. Ծրագրավորել ուսուցման պրոցեսը, ստեղծել նպատակ և մշակել քայլեր նպատակին հասնելու համար, կետ առ կետ իրականացնել մշակված քայլերը,
5. Ցանկացած պատմական իրողության մասին ռեալ պատկերացում կազմելու համար հավաքել տեղեկություն տարբեր աղբյուրներից, ուսումնասիրել տվյալ պատմական ժամանակաշրջանը և մարդկային փոխհարաբերություններ, միջպետական կապերը, հարևան երկրներում տիրող իրավիճակը:
6. Ստեղծված բարդ իրավիճակում մշակել լուծումների եւ իրավիճակի զարգացման տարբերակներ՝ հենվելով պատճառահետևանքային կապերի ուսումնասիրման և պարզաբանման վրա:

7. Ընդունված որոշումների հիման վրա մշակել գործողությունների պլան և հերթական գործողություններով հասնել ցանկալի արդյունքի:

Ինչպես նշվեց վերևում, այնքան էլ դժվար չէ զարգացնել վերլուծական մտածելակերպը, գլխավորն այն է, որ ծույլ չլինի ձեր ուղեղը: Օրինակ, երբ լսում են լուրերը, չեն սահմանափակվում մեկ հեռուստաալիքի (ինտերնետային կայքի, թերթի) առաջարկած տարբերակով, այլ սկսում են ուրիշ աղբյուրների ուսումնասիրություն, համեմատում են փաստերը եւ ներկայացնում են սեփական եզրակացությունները: Պարզապես դադարեք ամեն ինֆորմացիա կամ ընդունել, կամ կասկածել, մի խուսափեք ցանկացած իրադարձություն առողջ քննադատության ենթարկելուց, նայեք իրադարձություններին տարբեր տեսանկյուններից, փորձեք տեսնել ամբողջ պատկերը, այլ ոչ թե նրա անհատական հանելուկային մասերը, խոսակցության ընթացքում տրամաբանական շղթաներ կառուցեք: Այսինքն, նախքան արտահայտել արտահայտությունը, մտածեք, թե ինչ կլինի լսողի արձագանքը, ինչպիսին պետք է լինի քո արձագանքը կամ հաջորդ քայլը ընտրելու ամենահարմարը: Սա աշխատում է որոշումների կայացման, բարդ իրավիճակում խնդիրների լուծման, հակամարտությունների լուծման և այլնի համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարդկանց ընդունած որոշումներն ու դրանից բխող վարքագիծը, կատարած գործողություններն կախված է նրանց մտքերից: Մտքերը ձևավորվում են՝ ելնելով աշխարհայացքից: Կատարված գործողությունների վերջնարդյունքը կախված է մարդկանց մտքերի ճիշտ կամ սխալ լինելուց: Ցանկալի վերջնարդյունքի հասնելու համար մեր խնդիրն է զարգացնել միտքը, մտածողությունը, իրար հետ սերտորեն կապված մտածողության տարբեր ձևերը:

Մարդու ուղեղի մտածելու հատկության զարգացման մասին մտածելու ենք ծնված օրից: Դա նշանակում է, որ գործընթացին մասնակցելու են ծնողները, մանկապարտեզի և դպրոցի ուսուցչական անձնակազմը:

Մտածողության տարբեր ձևեր կան՝ քննադատական, ստեղծագործական, վերլուծական, տրամաբանական, կառուցողական, լեզվական և այլն: Բոլոր ձևերն էլ կարևոր են, բայց առավել կարևոր եմ համարում վերլուծական մտածողությունը: Իզուր չէ ասված «Պատմությունից դասեր քաղիր», «Տասը չափի, մեկը կտրի», «Ուրիշի սխալների վրա սովորիր»:

Տարրական դպրոցում երեխայի մոտ մտածողությունը զարգանում է պարզ վարժանքների, խաղերի միջոցով: Հիմնական դպրոցում հարցերի և խնդիրների միջոցով զարգանում է վերլուծական մտածողությունը: Ավագ դպրոցում արդեն շեշտը դրվում է պատմական երևույթների մանրամասն ուսումնասիրման, պատճառահետևանքային կապերի պարզաբանման, դրդապատճառների, կարևոր և երկրորդական գործոնների բացահայտման, տվյալ պատմական ժամանակաշրջանում տիրող կարգերի և պայմանների վրա:

Վերլուծական մտածողությունը անհրաժեշտ է մարդուն ճիշտ որոշում կայացնելու ցանկացած իրավիճակում, հատկապես պետական քաղաքականության հետ կապված հարցերի լուծման ժամանակ: Մեզանից յուրաքանչյուրի վերջնական որոշումից է կախված ազգային և պետական քաղաքականության խնդիրների լուծումը, երկրի անվտանգությունը, սահմանների պաշտպանությունը, մեր երկրի ապագան:

Գիտության և տեխնիկայի արդի պայմաններում առավել կարևորվում է մտածողության դերն ու նշանակությունը՝ որպես ազգային արժեհամակարգի և ինքնության պահպանման, մարդու և քաղաքացու գիտակցության և ինքնագիտակցության զարգացման, մարդկային և համամարդկային արժեքների պահպանման կարևոր և վճռորոշ գործոն:

ՀԱՎԵԼՎԱԾ


1
փնտրել
ճշմարտությունը
2
մշակել
մտածողության
Վերլուծական
մտածողություն
3
խնդրի
լուծում
4
որոշման
կայացում
5
գործնական
կիրառություն

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Վերլուծական մտածողությունը հիմնված է ապացույցների վրա, այլ ոչ թե հույզերի:

Վերլուծական

Ինչպես ցույց է տալիս նրա անունը, այն վերլուծական է, քանի որ այն քանդում է ամբողջի մասերը՝ յուրաքանչյուրի

Հաջորդական

Այն հաջորդական է, քանի որ հետևում է վերլուծության հաջորդականությանը՝ ուսումնասիրելով գծային, առանց

Վճռական

Այն որոշիչ է կամ կոնվերգենտ, քանի որ բոլոր ժամանակներում կենտրոնացած է լուծման որոնման վրա: Վերլուծական մտածողությունը քիչ է տրվում թփի շուրջը ծեծելու կամ այլընտրանքային

Կառուցվածքը

Բոլոր միտքերը, և վերլուծական մտածողությունը բացառություն չէ, ռացիոնալացած է ու թիմնական

Օգտագործված աղբյուրների գրականության ցանկ

https://hy.unistica.com/վերլուծական-մտածելակերպ/ հասանելի է 15.11.2021

https://www.internest.am/վերլուծական-մտածողություն/ հասանելի է 17.11.2021

https://hy.wikipedia.org/wiki/Մտածողություն/ հասանելի է 14.11.2021

http://shsu.am/media/journal/2019n1b/6.pdf հասանելի է 18.11.2021

https://aspu.am/website/images/old/upload/file/1(187)pdf/ հասանելի է 17.11.2021